


ոյ և—ու վերջաւորութեանց: Ֆռանկուն ձևի հետ միաժամանակ ունինք նաև ֆռանկունոյն:

Բայական ձևերից ուշադրութեան արժանի է զհետև ձևը:— Ընել վերջաւորութեան կերպարանափոխումը— նույն-ի արապիտող չէ ամբողջ խոնարհման մէջ, երբ ունինք նաև զհանկոյ:

Այս շրջանի աւանձնայատկութիւններից մին էլ բառադանձի աղբատութիւնն է բնիկ հայերէնի բառերից և ճոխացումը Ֆրանսական և արաբական տարրերով: Զարիստ հին Փր. chapistre բառն է. իսկ ջումլ արաբերէն է: Լիով բառի ուղղականն է լո f (նաև լաւf), իսկ նապղել բառն համապատասխանում է դոկ. նապղեմ անուանածանց բային և արմատն է նապղ, որ նոյնպէս ծանօթ էր դասական գրողներին. արդի գրական լեզուի մէջ այս բառն ընկած է գործածութիւնից, իսկ բարբառներում ապրում է դեռ բաժանել-ի իմաստով: Արաբական ջումլ բառի մէջ զ-ի փոխարէն կապասէի ն, քանի որ սոյն շրջանում բաղաձայնների ձայնական փոխանակութիւնն արդէն տեղի էր ունեցած: Հաւանօրէն գրչի կողմից մի սխալ է. այլապէս պիտի ենթադրել որ ջումլ շատ հին փոխառութիւն է, տեղի ունեցած մի այնպիսի շրջանում, երբ արաբական զ ձայնը հայերէն զ-ին էր համապատասխանում Կիլիկեան շրջանում: Այս վերջին ենթադրութիւնն ինձ հիմնական չի թւում:

Մ. վարդ. Մախուդեանց



ԳՐԱԽՕՍԱԿԱՆ—ՔՆՆԱԴՍԱԿԱՆ

(ՄԱՐԻԱՄ ԽԱՏԻՍԵԱՆ *)

Արիստոկրատիայի դասակարգային նախապաշարունակներն ու դրա հետ կապուած հոգեկան-մտաւոր-բարոյական արատներն այնքան խորն են արմատ բռնած, որ օտար միջավայր ու շրջանն անգամ անկարող են հանդիսանում արմատախիլ անել ընդ միշտ մատաղ արիստոկրատի հոգուց նրա այլանդակութիւնները, կեանքի վրայ ունեցած թեթև ու սին հասկացողութիւնները: Գուցէ հիմք ընդունելով ժողովրդականութեան դերը կեանքի մէջ, թատիսեան մութ գոյներով է նկարագրում նաև բուրժուական ընտանիքների այն անդամներին, որոնց նախնիք ազնուական ծագումն են ունեցել: Ազնուականի հոգեբանութիւնը, մտածելակերպը, կեանքի

*) Տես սոյն Թ. հոկտեմբեր «Արարատ»:

վրայ ունեցած աշխարհահայեացքը, լրիւ կամ թերի կերպով, բուն դրած ենք գտնում նաև հարազատ շրջանից հեռացած և օտար-բուրժուա շրջանում հիւրընկալուած անհատների և վերջինների սերունդների վրայ: Նոր միջավայրը, նոր շրջանը, նոր կենցաղը զօրեղապէս ազդում, փոփոխում, բայց անկարող են հանդիսանում բոլորովին արմատախիլ անել հնի աւանդները. մի յարմար առիթ՝ և հինը վերակենդանանում է: Տիկին Գնունին (փեսայ որսողներ) ազնուականութեան այդ մատղաշ ոստիկը պոկուել էր իւր հարազատ ընից և պատուաստուել օտար ընի վրայ: Հայրական տնից նա իր հետ տարել էր ազնուականին վայել ներքին ու արտաքին յատկանիշները. ֆրանսերէն էր կոտրատում, նուագում էր մի քանի սալոնական կոտորներ և կարողանում էր իր անբռնազօսիկ ձևերով հասարակութեան վրայ որոշ տպաւորութիւն թողնել: Այդ ձիրքերով օժտուած, նա ընկել էր գաւառ և ոչ միայն գեր էր կատարում, այլ և յայտնի շնորհքների, ընդունակութիւնների, մեթոդների ու տակտիկայի շնորհիւ կարողացաւ նահանգական քաղաքներից մէկում ամուսնու համար մի նշանաւոր պաշտօն ձեռք բերել: Առիթը պատրաստ էր, նրա մէջ աստիճանաբար զարթնեցին նախկին տենչերն ու ցանկութիւնները. նոր թափով նա պատրաստուեց իրեն ձգել կենդրոնական քաղաքի ազնուական և աստիճանաւոր ընտանիքների շրջանը, սերտ յարաբերութիւն ստեղծել նրանց հետ, գուցէ և ազնուազարմ փեսայ երազել իր դստեր համար: Վերջին փայլուն հեռանկարը մանաւանդ վերարտադրում է նրա հոգում մինչ այդ քնած, ժամանակաւորապէս թմրած դասակարգային նախապաշարութիւնն ու մնապարծութիւնը. գլուխ է բարձրացնում նրա մէջ վաղուց արդէն լուծ արհամարհանքը դէպի «տարիաշկանները», դէպի «կինտօները»:—«Հէնց այդ շրջանն է (վաճառականական), որ ես չեմ ուզում ճանաչել, մեր ցեղի մէջ երբէք վաճառական չի եղել և չպէտք է լինի... էլ ինչո՞ւ համար էիր դու նրան ֆրանսերէն, երաժշտութիւն և երգեցողութիւն սովորեցնում. միթէ նրա համար, որ յետոյ մի անտաշ կինտօի կին դառնայ... հասկացիր, որ Սոնիան (աղջիկը) այդ տեսակ մարդու հետ չի կարող մինչև անգամ երեւալ մարդավարի հասարակութեան մէջ. նա ամեն քայլափոխում պէտք է կարմրի իր ամուսնու փոխարէն»: Եւ այս խօսքերն ասում է նա իր մարդուն տամնեակ հաղարնների տէր հարուստ վաճառականի որդի Տէր Անդրէասեանի մասին, որը եղել էր ռուսական և արտասահմանեան համալսարաններում, խօսում էր ֆրանսերէն, գերմաներէն և առհասարակ ամեն կողմից վայելուչ մարդ էր, ինչպէս որ խոստովանում է հէնց ինքը օրիորդ Սոնիան: Զարմանալու, ի հարկէ, ոչինչ չկայ, քանի որ մենք գործ ունենք դասակարգային

Նախապաշարմունքներով կուրացած անձնատրութիւնների հետ, հէնց ինքն օրիորդ Սոնիան, որ լաւ ճանաչում էր Տէր Անդրէասեանին, գիտէր նրա առաւելութիւնները մի ինչ որ իշխանական ծագումն ունեցող գնդապետի նկատմամբ, բոլորովին այլ կերպ է մտածում, մեր կարծիքով հիւանդոտ և անմիտ կերպով, բայց դասակարգային ըմբռնողութեան տեսակէտից շատ առողջ և արդարացի։ Նա նախապատուութիւնը տալիս է գնդապետին, փեսացուն տրեւելու խնդրում, ի նկատի ունենալով միմիայն և միմիայն նրա իշխանական ծագումը։ Սակայն գնդապետի նշանուէրը, Սոնիայի աչքերի տակի օր առւր նկատելի դարձող կապուտակներն ու երեսի կնճիռները վճռական նշանակութիւն են ունենում։ Գնունիններն ստիպուած են լինում իջնել պահ մի իրենց դասակարգային բարձրութիւնից և ձեռք մեկնել «տարգաշկային»։—Նրա ծագումը, նրա ազգակցութիւնը, ճշմարիտ է, այնքան էլ հրապուրիչ չեն, բայց ինչ արած, որ նրանից լաւը չի ճարուում, պէտք է նրանով էլ բաւականանալ, ստում է օր. Սոնիան և սկսում փռել իր ցանցերը. էլ նախապէս անդիր արած սիրային դարձուածներ, էլ երդումներ, հիւրասիրութիւն, ախեր ու վախեր, որոնց բոլորէապէս վերջ է տրւում և Գնունինների տան դռները վերջնականապէս փակւում փեսացուի առջև, երբ լսում են նրա հօր սնանկութեան լուրը։ Բարոյականութեան մի գեղեցիկ նմուշ... Փողի հմայքը վերջապէս Սոնիային ձգում է արտասուածաթաթախ, ապուշ աչքերով, կարմիր քթով, հաստ պռօշներով, ճաղատ գլխով հարուստ դրամատէր ծերունի Սեգանովի գիրկը, որին Սոնիան ատելով ատում էր։ Այդ գեղեցիկ արիստոկրատիկ ամուսնական գեշեֆտով բախտաւորւում են մայր ու աղջիկ։ Տիկին Սեգանովը գտնում է նախկին տարփածուին—իշխան գնդապետին և ամուսնական քօղն իբրև ազատութեան դրօշակ ծառայեցնելով՝ անձնատուր լինում նորանոր հաճոյքների, իսկ մայրը—տիկին Գնունին «հրճուանքով գիտում է իր աղջկայ խաղերն այլոց հետ և յիշում իր անցեալը»։ Երջանիկ ժամեր... խեղճ Սեգանով...

Հակակրանքը տեղի է տալիս համակրանքի, երբ վիպասանունին արիստոկրատիկ ընտանիքներից անցնում է նոր արմատ բռնող բուրժուազիային, հայ առևտրա-արդիւնաբերական դասակարգին։ Առևտրա-կապալառական եռուն գործունէութիւնը, հայ բուրժուազիայի տնտեսական յաջողակ կեւը կազմալուծող, քայքայող ֆէօդալ ազնուականութեան գէմ չէր կարող վրիպել նոյն այդ շրջաններում ծնուած ու սնուած վիպասանունու աչքից և նա, եթէ ոչ գիտական թէօրեանների վրայ հիմնուած, զոնէ

բնադրով կանխատեսում էր հայ բուրժուազիայի յաղթական դափնիներն ու գերիշխող դիրքն այդ ասպարէզում: Կապիտալի կուտակումը հայ բուրժուազիայի ձեռքում շատ մօտ էր նրա սրտին, որովհետեւ նա այդ հանգամանքի մէջ տեսնում էր որոշ նպատակ, միաքէ Սոցիալական կնճռոտ հարցերի լուսարանումը չէր, որ զբաղեցնում էր վիպասանուհուն, այլ այն հասարակ խնդիրը, որ զբամի ուժով հայ բուրժուազիան կարող կը լինի նպաստել ազգային վերածնութեան, մտաւոր-կուլտուրական գործունէութեան թէ կովկասում և թէ Տաճկահայաստանում: Չնչին մարակուսներն, աննշան յարձակումները բուրժուական դասակարգերի այս կամ այն պաշտպանութեան դէմ մեզ չպէտք է շփոթեն, սխալ եզրակացութեան բերեն. իւրաքանչիւր դասակարգային իդէօլոգ, ամեն մի դասակարգի ջատագով գրող, պաշտպանելով հանդերձ իր սիրած դասակարգը, վեր դասելով նրա շահերը՝ պայքարում է միաժամանակ նոյն այդ դասակարգի ծոցում բուն զրաժ դանազան ախտերի, արատների դէմ և այդ, ի հարկէ, յանուն դարձեալ իր դասակարգի շահերի: Նոյն այդ ճանապարհով է ընթանում և մեր վիպասանուհին, որքան որ նրա գիտողականութիւնն ու հոգեբանական ըմբռնումները թոյլ են տալիս և նպաստում են նրան նրա աչքում գին ունին Յարութիւն Կէտիչեանները (նոր ճանապարհայ), որպէս գործնական խելքի տէր, չնայած որ դանազան խորամանկութիւնների ու խարդախութիւնների միջոցով միայն կարողացել են գործակոտորի գրութիւնից հասնել «խաղէկինի» դիրքի: Եգոր Մկրտումեանը, թէև անգրագէտ, ազդեցութեան տակ ընկնող, ուրեմն և դուրկ սեփական աշխարհայեացքից, կամքից, այնուամենայնիւ համակրանքի արժանի է, որովհետեւ մտաբաց է, ձեռներէց, առատաձեռն: Խոստովանում ենք, որ ձեռներէցութիւնը կապիտալիստի համար մի պիւս է. սակայն եթէ այդ էլ չլինի, եթէ հայ առևտրականը, նրա ընտանիքը առանձին բարեմասնութիւն էլ չունենան, այնուամենայնիւ արող չափով արժանիք ունին, որովհետեւ ըստ հեղինակի, բարի են, սրտաբաց: Մի պակասութիւն սակայն հայ բուրժուա ընտանիքներում, որ խորը խոցում է հեղինակի սիրտը, այդ բնութանեկան կրթութեան-դաստիարակութեան յոռի ձևն է: Տէր Անդրէասեանի ծնողները ոչ միայն երես էին տուել իրենց որդուն, կատարել նրա ամեն մի չնչին քմահաճոյքը, այլ և թոյլ էին տուել իրենց որդու ներկայութեամբ նկատելու, որ Քիրենց միակ որդին ամենևին կարևորութիւն չունի ծանրաբեռնել իրեն զրազմունքներով, քանի որ իրենք այնքան հարուստ են, որ կարող են միշտ ապահովել իրենց միակ զաւակի կեանքը: Գուցէ կարելի լինէր այդ հանգամանքը բացատրել շատ սովորական ձևով—Տէր Անդրէասեանի միևնուճար լինելով, եթէ չկարգայինք

տողերի մէջ հեղինակի խորը կսկիծն ու տրտունջը, թէ մեր հարուստները կրթութեան նշանակութիւնը լաւ չեն հասկանում, նրանց հարկաւոր է միայն բարձր կրթութեան անունը և ուրիշ ոչինչ: Տէր Անդրէասեաններն էլ իրենց որդուն հէնց այդ նպատակով ուղարկում էին զանազան համալսարաններ, թէ և նա ոչ մի տրամադրութիւն չէր ցոյց տալիս լուրջ կերպով պարապելու և գիտութիւն ձեռք բերելու: Մեծ քաղաքների նրան անծանօթ հաճոյքները, զանազան պարահանդէսներն ու հաւաքումները կլանել էին նրա ուշադրութիւնը: Ասենք, նա առաջ էլ, իր հայրենի քաղաքում, մի բան չէր ներկայացնում իրենից. մի քանի դաստիարակների օգնութեամբ հազիւ հազ կարողանում էր գասարանները փոխել, թափառել էր միջնակարգ դպրոցներում, երկու տարուայ ընթացքում մի քանի ուսանկան համալսարան փոխել: Իսկ այժմ, արտասահմանում, ուր չորս տարի շարունակ չափփիւ էր ֆրանսիական, գերմանական մեծ քաղաքների փողոցները և համալսարանների շէմքերը, ոչ միայն ոչինչ չէր արել բացի դուր ժամավաճառութիւնից, այլ և ահագին գումարներ էր մխսել, ինչպէս որ անում են այժմ էլ խոշոր բուրժուազիայի մատաղահաս զաւակները: Սակայն այսպիսի հասարակական տեսակէտից մեանդամայն փաստակար և անհատական տեսակէտից ցոյի կեանք վարողն անգամ արժանանում է վիպասանուհու համակրանքին, դուրս է գալիս որպէս ընդունակ, բարի և այնպիսի բարձր հոգեկան արժանիքների տէր, որ Սոնիայի սիրոյ ազդեցութեան տակ ընդունակ է նրա ողջ բնութիւնը և նա դառնում է բարոյապէս բարձր, մաքուր, մի խօսքով անմեղ հրեշտակ, օ, սուրբ անմեղութիւն. որքան հեշտ են սրբում, մաքրում բուրժուաները...

Հեղինակի համակրանքն աւելի զօրեղ շեշտով արտայայտւում և ուղղւում է դէպի հայ ինտելիգենցիան, դէպի ազատ պրօֆեսիայի տէր անձինք, որոնք բուրժուազիայի զաղափարների ու հայեացքների մեկնաբանողն ու արտայայտողն են ներկայանում: Թաղաղ կուլտուրական աշխատանքն ընդունելով իբրեւ կուլտ, հեղինակն անբասիր, ազնիւ ու շիտակ անձնաւորութիւններ է ներկայացնում մեզ, որոնք այդ կուլտի խնկարկողներն են, հիմնաւորողները. որոնք նուիրուած հայրենիքի վերածնութեան սրբազան գործին, տքնում, աշխատում են օր ու գիշեր յանուն հայ ժողովրդի լուսաւորութեան, առաջագիմութեան: Ճիշտ է, այդ ինտելիգենտներից պատահում են փառաւոր ֆրադէօլոգներ, որոնք անուն, հռչակ ստեղծելու համար պատրաստ են կիզծել, խաղալ ամենանոէրական զգացմունքների ու ազգային գաւաի հետ, որոնք առիթը չեն փախցնում յեղափոխականի դիմակ առնելու, երբ համոզուած են, որ այդ ճանապարհով կարող են յարգանք, փառք

վաստակել և իրենց մասին խօսել տալ, բայց այդպիսիների թիւը շատ սահմանափակ է, դրանք բացառութիւններ են, և վիպասանութիւն այդպիսի երկու նմուշ ունի միայն. Ռուբէն Գեօկչեան և օր. Օլիա (Նոր ճ. վ.): Գեօկչեանն, իբրև բացասական տիպ, դիսսօնանս է կազմում գործունէութեան ծարաւով բռնուած զաղափարական գործիչների շարքում: Ներդաշնակութիւնը չխանգարելու համար՝ վիպասանութիւնը զատում է նրան իր երբեմնի ընկերներից, հէնց որ նրա փառասիրութիւնը յագեցնում է, մեծ պաշտօն է ստանում: Նոյնպիսի մի բացառութիւն է նաև Օլիան, որը գիւղում դասաւանդում է յետին մտքերով—ինկատի ունենալով, որ այդ հանգամանքը դուր է գալիս իր մի ծանօթ զաղափարական հարուստ երիտասարդին: Սակայն մի հանգամանք. այս ինտելիգենտ բացասական տիպերին չի կարելի հեղինակի տուած արիստոկրատիկ տիպերի հետ կողք կողքի մի շարքում դասել, որովհետև սրանք իրենց բացասական յատկութիւններով հանդերձ ունեն բաւական դրական կողմեր, որոնք արժանանում են անշուշտ հեղինակի քաջալերութեան, համակրանքին: Մնացած ինտելիգենտներն անրիժ են, անկաշառ, ոգևորուած սուրբ գործով, զաւառասէր, աշխատասէր և այլն և այլն: Ուսուցիչներ Մանուկեան, Լուսեան, Թիշկ Ակումեան մի մի լուսատու աստղեր են հայ երկնակամարում, օրինակելի անձնաւորութիւններ:

Իսկ կիւն գործիչները... շատ բնական է, որ կիւնն առհասարակ, մասնաւանդ կիւն գործիչն, աւելի պիտ գրաւէր կիւն գրողի ուշադրութիւնը: Կնոջ ազատագրման, անկախութեան, ինքնուրոյնութեան բարդ ու կնճռոտ հարցը պէտք է զբաղեցնէին և իրօք զբաղեցրել են վիպասանութեան և նա աշխատել է լուսարանել այդ խնդիրը ուժերը ներածին չափ: Իբրև լիբերալ բուրժուազիայի զինակից՝ հեղինակը կռիւ է յայտարարում կնոջ կաշկանդուած, աշտու դրութեան դէմ և պաշտպանում կնոջ ազատութիւնն ու ինքնուրոյնութիւնը: Գայիանէն (Դժբախտ էին) խորհուրդ է տալիս Ատունիների իշխանական տունը գնացած իր դժբախտ ընկերուհուն համարձակ լինել, պաշտպանել իւր իրաւունքները: Ճիշդ մէկը համարձակուէր այդպէս ինքնակամ տէր կանգնել իմ երեխային, ևս նրան ցոյց կը տայի... Եթէ ես լինէի, ամեն միջոց գործ կը դնէի, որ ազատուեմ ամուսնուս բռնակալութիւնից... Անվեհեր եղիր, գրիւր մի քանի խօսք միայն և ես իսկոյն թե առած կը թռչեմ դէպի քեզ, կաղատեմ քո բռնակալների ճանկերից: Նոյն ձևով են մտածում և միւս օրիորդները—Վարիան, Լիզան և Հովիսիմէն. և եթէ նրանց բոլոր ձգտումները բերենք մի յայտարարի, մեզ համար պարզ կը լինի մեր վիպասանութեան իդէալը կնոջ մասին—լինել ազատ, անկախ, ինքնուրոյն, զինուել գիտութեամբ,

ապրել սեփական աշխատանքով, մասնակցել հասարակական գործունեութեան, լուսաւորել գիւղական խաւար միջնորոտը: Զարմանալի չի ուրեմն այդ տեսակէտից, որ նրա կանացի հերոսները, եթէ կարելի է այդպէս արտայայտուել, վարժունիներ են, կամ մասնաւոր դասեր են տալիս, կամ դասաւանդում դպրոցներում, ազատ ժամերին զրադոււմ են թարգմանութիւններով, հասարակօգուտ բնկերութիւններ են կադմում և այլն: Հասարակական բնոյթ կրող ամեն մի կոչ արձագանք է գտնում նրանց սրտում: օրիորդ կիզան ցանկութիւն է յայտնում նոյն իսկ գնալ Տաճկահայաստան իր սիրած տղամարդի հետ:

Ինքնուրոյն կլինն անշուշտ իր ուրոյն կարծիքն ու հասկացողութիւնը պէտք է ունենար ամուսնական խնդրի նկատմամբ: Նա չէր կարող հաշտուել տիրող ամուսնական կարգերի հետ, ուր նիւթականը վճռական դեր էր կատարում մինչ ամուսնական շրջանում, իսկ կնոջ ստորադաս և իրաւազուրկ դրութիւնը՝ ամուսնական շրջանում: Խառնուեանի հերոսունիները գիտակցելով, որ նիւթական հաշիւն ամուսնական խնդրում ստորացնում է մարդկային արժանապատուութիւնը, պահանջում են, որ բնորոշութիւնը կատարուի առանց այդ գոեհիկ հաշիւն ի նկատի ունենալու և որ ամուսիններն օգտուեն հաւասար իրաւունքներով, «են կը նստեմ, կը նստեմ, ասում է Գայիանէն, մինչև որ գտնեմ այնպիսի մարդ, որն ինձ վրայ նայէ, որպէս իրեն հաւասար մի էակի վրայ»: «Ես ամուսնութիւնը չեմ համարում նիւթական հաշուի և խղճի մէջ կայացած համաձայնութիւն, որ վերին աստիճանի ստորացնում է մարդկային արժանապատուութիւնը: . . . Աւելի լաւ է մեռնել, քան նուիրուել մէկին նիւթական հաշիւներով, ասում է Լիզան: Ստորագրելով հանդերձ այս զեղեցիկ մտքերի տակ, պէտք է նկատենք այնուամենայնիւ, որ զեղեցիկ ցանկութիւններով չեն լուծւում կնոջ ազատագրման նման բարդ խնդիրները, դա դժուարալուծելի սոցիալական պրոբլեմներից մէկն է, որի լուծման համար հատորներ են գրուել, մանրագինն ու խորը քննութիւններ կատարուել, բայց նա էլի կայ, էլի զրադեցնում է շատ ականաւոր ուղեղներ և կը մնայ էլ, քանի որ գոյութիւն կունենայ բուրժուական հասարակակարգը:

Խօսելով հայ ինտելիգենցիայի մասին՝ հեղինակը շատ պարզ և որոշակի կերպով ձևակերպում է նրա դերը հայ կեանքի մէջ, հայ ինտելիգենցիան միասիւս ունի կատարելու երկու ֆրօնտի վրայ—գաւառում Կովկասահայերի մէջ և Տաճկահայաստանում: Կարձ՝ հեղինակի կոչն է դէպի գաւառ և դէպի Տաճկահայաստան:

Իննսունական թուերի հասարակական հոսանքների ազդեցութիւնն է անշուշտ, որ նկատուած է հեղինակի վրայ: Յեղափոխական մըտքերն ու ծրագրներն այդ ժամանակ հայ ինտելիգենցիայի բաւական խոշոր շրջանի սեփականութիւն էին դարձել և չէին կարող չզբաղեցնել նաև հասարակական խնդիրներով ու գործունէութեամբ հետաքրքրուող կ'ին գրողին: Տաճկահայերի ազատագրման հարցը հայ լաւագոյն մտքի հոգածութեան առարկան էր դարձել և մի գիտակից ինտելիգենտ հայ աշխատում էր իւրովսանն իր լուծման ձգել, նպատուել Տաճկահայի ազատագրման: Հրատապ հարցեր էին, ինչպէս և ներկայումս, Տաճկահայի զինման, ինքնապաշտպանութեան, լուսաւորութեան խնդիրները, որոնց շուրջը առաջացել և առաջանում էին զանազան վիճաբանութիւններ, հայեացքների բաղխումներ, գործունէութեան ծրագրներ: Պատիսեանի ծրագիրը շատ պարզ է և հասարակ, նրա հայեացքներն ու մտածելակերպը լիբերալիզմի սահմանից միւս կողմ չեն թեւակոխում. խաղաղ կուլտուրական աշխատանք, ահա նրա լոզունգը: Աւելին պահանջել իննսունական թուականի հայ կնոջից՝ իրաւունք էլ չունինք: Այսպէս ուրեմն Պատիսեան թէ Կոսկասի զաւառների և թէ Տաճկահայաստանի համար քարոզում է նոյն խաղաղ կուլտուրական աշխատանքը, որից միայն սպասում էր հայ ժողովրդի վերածնութիւնը:

Հարկ չհամարելով քննել ու քննադատել հեղինակի հայեացքներն ու կարծիքները՝ վերջացնում ենք, շեշտելով մի անգամ ևս, որ Կովկասահայ առաջին և միակ վիպասանուհի Մարիամ Պատիսեանը ներկայանում է մեզ իր վէպերում որպէս պայքարող ընդդէմ հայ արիստոկրատ ընտանիքների դասակարգային նախապաշարունակների և դրանից բխող արատների ու պակասութիւնների և յանուն մտաւոր կուլտուրական խաղաղ գործունէութեան Կովկասում թէ Տաճկաստանում, ուր եռանդուն մասնակցութիւն պէտք է ունենայ անկախ, ազատ, ինքնուրոյն, գիտութեամբ զինուած և սեփական աշխատանքի տէր հայ կինը:

Հ. Յովակիմեան.